



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ՀԱՅՐԱՎԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԴԱԿԻ ՀԱՐԱՎԱՅԻ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԳԵՐԱՎԱՏԻՎ Տ. ՍԻՌՆ ԵՎԻՄԿՈՎՈՍԻ
ՄԱՆՈՒԿՅԱՆ, ՀԱՐԱԶԱՏԻ ՄԱՅՐ ԱՐՈՈՈՈ ՄՐԲՈ
ԷՇՄԻԱՆԻ ԵՎ ՀՈԳԵՆԻ ԶԱՎԱԿԻ ՄԵՐՈՒՄ ՆԱԵՎ
ՀԱՄԱՅ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՈՂՋՈՒՅՑ
ՀԱՅՐԱԿԱՆ ԵՎ ՕՐՃՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՐԱՎԵՏԱԿԱՆ

Հայ նկեղեցու և հայ ժողովրդին ճվիրված հոգևորականի էական առաքի-նորյաւններից մեկն է, որ նա անտրուն և սիրով հանդես գա և պաշտոնավարե այնտեղ, որ կոչում է նրան հավատացյալ ժողովուրդը: Մենք այդպիսին ենք նաև աշխատական կոչման արժանացրել և, իրեւ այդպիսին, կարգում ենք Հայրապետական պատվիրակ Հարավային Ամերիկայի, որ կոչում է Զեզ հայ ժողովուրդը և նրան առաջնորդող հոգեւոր իշխանությունը:

Միանգամայն վտանի ենք, որ խոնեմուրյուն և իմաստուրյուն կունենա՞ փորալու Զեր պաշտօնատեղին և Զեր ուժերը ճվիրելու Հայ նկեղեցու և մեր սիրելի վտարանդի հայ ժողովրդի վերեւը բուժելու:

Հարավային Ամերիկայի հայ ժողովուրդը եկեղեցաւր, ազգասեր, հայրենասեր և ազգային ավանդություններն ու սրբությունները հարգալ ու պահպանող մի ժողովուրդ է, որ սակայն չորս հատվածներից է կազմված և ոռոցից յուրաքանչյուր դեկապարվում է անկախութեն իր առանձին կանոնադրությամբ: Աներածեշա է վերոնիշյալ չորս հատվածները կապել ու միացնել մի ընդհանուր կանոնադրությամբ, հար և նման հայրապետականատ կանոնադրության, որով առաջնորդվում են բոլոր Հայրապետական քեմերը: Այդպիսի կանոնադրություն ունի Հյուսիսային Ամերիկայի արևելյան քեմը, որով կարելի է դեկապարվել նոր կանոնադրություն խմբագրելիս: Նոր խմբագրված կանոնադրությունը պետք է ներկայացնել ի տեօրինություն Ամենայն Հայոց Հայրապետի՝ խնդրելով հաստատել Հարավային Ամերիկայի քեմը՝ վերոնիշյալ չորս հատվածներից կազմված և Հայրապետականատ կանոնադրությամբ առաջնորդի ընտրության իրավունք ստանալ: Անա առաջին և կարևորագույն լուծելիք հարցը, որ դրվում է Զեր առաջ և որի լուծումն անհրաժեշտություն է:

Երկրորդ հարցը ձուլման վտանգն է, որ ծառացած է յուրաքանչյուր հայ վտարանդի համայնքի առաջ: Այս վտանգի առաջն առնելու էական միջոցը—հայրենադրածն է. սակայն, նկատի առնելով, որ ներկայումս, ժամանակուրապես, այդ հարցը կանգ է առել, կարեւոր է ազգային ինքնազիտակցությունը զարգացնել և հայ մշակույթի շնորհիվ պահպանել ընտանիքներում հայ լեզուն,

ազգային ու կրօնական ավանդություններն ու սովորույթները, կազմակերպել հրապարակային մատչելի դասախոսություններ ազգային և եկեղեցական պատմական թեմաներով՝ զորացնելով և, ի հարկին, զարքեցնելով ազգասփրական և հայրենասփրական զգացմունքներ ժողովրդի մեջ։ Օտար ամուսնություններից հեռու պահել հայ երիտասարդներին, կանանց և օրիորդներին։ Կազմակերպել միուրյուններ և աշխատել, որպեսզի հայ ընտանիքն անարատ հայ մնա:

Երրորդ հարցն է՝ Հայրապետական Արոնի և Հայրենի երկրի հնտ կապս ամուս պահել՝ ծանոքանալով նոցա գործունեության հնտ և լուսարանելով Հայրենի երկրի վերելքը և նորա ենրիկ վիճակը, որ զորեղ ազդակ է հայ մնալուն։ Երե դուք այս ոսլին բռնեք, վստահ ենք, թե հազորություն կունենաք, համակրոյքն իշանիք և հեղինակություն ձեռք կրերեք, որ եզրագույնս կճպատեն:

Իմ սիրելի Հայ ժողովուրդ, յուրաքանչյուր անհատ ձգուում է առողջ և երկար ապրելու. ազգերն և ձգուում են նույն նպատակին, որին հասնելու համար անհրաժեշտ է, որ ազգի համապատասխան կենտրոնացած լինեն հայրենի երկրուն, որպեսզի ազգը ֆիզիկապես զորավոր, տնտեսապես պատճով, կուլտուրապես զարգացած լինի, և մտքի ու զգացմունքի միուրյուն ու նմանություն ունենա։ Այս կարենու պայմաններն ստեղծելու և ժամանակին իրացնելու համար է, որ կարգում ենք Մեր լավագույն եպիսկոպոսներից մեկին Հայրապետական Պատվիրակ՝ ընդառաջելով Զեր ցանկության։ Սակայն այս ծանր բերք տանելու համար կարենու է Զեր աշակցությունը։ Իմ սիրելի ժողովուրդ, շրջապատեցեք նորան, գուրգուրացեք նորա վերա, տնտեսապես անկարու պահեցեք, և որ զիսավորն է՝ լսեցեք և վստանեցեք նորան, որ նա ֆիզիկապես և մտավորապես կորովի դառնա և արիանա ու աշխատանքի լծվի, որպեսզի մի օր Զեզ էլ տեսնենք Հայրենի երկրում բախտավոր և երշանիկ Ազգի ծոցում։ Եվ մենք մի ցանկություն ունենք. ներքին և արտաքին հայրենադրձի շնորհիլ Հայրենի երկրում տեսնելով հայ ժողովրդին կենտրոնացած և ազգ դարձած, և շնորհիլ իր տոկունության և աշխատասիրության, ֆիզիկապես զորեղ, տնտեսապես հարուստ, կուլտուրապես զարգացած, բախտավոր և երշանիկ, միմբարվենք ու Մեր բաղձանեցին հասած Զաքարիայի նման գոշենք. «Արդ՝ արձակեա զծառայն Տն ի խաղաղութիւն», գոցենք Մեր աշերեր՝ փառ տալով Ամենակալին։ Ողջ լեռու զօրացեալ ի նոգոյն Մըրոյ և օրինեալ ի Տեառնէ և ի Մէնզ. ամէն։

Գ Տ Ա Ր Գ Զ Ը

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՎ ՇԱՅՐԱԳՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուակ կանոնական ի 5-ը փետրվարի 1952

Փրկչական ամի և ի Տումարիս ՌԱՆ.
յուրեներորդ ամի Հայրապետութեան մերոյ,
ի Ս. Է Զ Մ Ի Ա Ն Ի Ն.